ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

«26» 10 2021թ.

ՀՐԱՄԱՆ N 561-Հ

«ՅՈՒՏԷՅՐ» ԱՎԻԱԸՆԿԵՐՈՒԹՈՒՆ» ԲԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԵՐԿՈՒ ԵՎ ԱՎԵԼԻ ՈՉ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 29-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1ԻՆ ՄԱՍԻ «Զ» ԿԵՏՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ավիացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 6-ի թիվ 1005-Ն որոշման N2 հավելվածի 18-րդ կետով և հիմք ընդունելով «Յուտէյր» ավիաընկերություն» ԲԲ ընկերության 2021 թվականի հոկտեմբերի 21-ի հայտերը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «Յուտէյր» Ավիաընկերություն» ԲԲ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրել Սոչի/URSS/-Երևան/UDYZ/-Սոչի/URSS/ երթուղով՝ 2021 թվականի նոյեմբերի 3-ից մինչև 2022 թվականի մարտի 23-ը՝ շաբաթական 1 (մեկ) չվերթ հաճախականությամբ, Կրասնոդար/URKK/-Երևան/UDYZ/-Կրասնոդար/URKK/ երթուղով՝ 2021 թվականի նոյեմբերի 5-ից մինչև 2022 թվականի մարտի 25-ը՝ շաբաթական 1 (մեկ) չվերթ հաճախականությամբ, Տյումեն/USTR/-Երևան/UDYZ/-Տյումեն/USTR/ երթուղով՝ 2021 թվականի նոյեմբերի 6-ից մինչև 2022 թվականի մարտի 26-ը՝ շաբաթական 1 (մեկ) չվերթ հաճախականությամբ, Մոսկվա/UUWW/-Երևան/UDYZ/-Մոսկվա/UUWW/ երթուղով՝ 2021 թվականի նոյեմբերի 3-ից

մինչև 2022 թվականի մարտի 23-ը՝ շաբաթական 1 (մեկ) չվերթ հաճախականությամբ Հայաստանի Հանրապետության տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս երկու և ավելի ոչ կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվություններ:

2. Օդային տրանսպորտի միջազգային ասոցիացիայի (ԻԱՏԱ) ձմեռային ժամանակահատվածում 2021 թվականի նոյեմբերի 6-ից մինչև 2022 թվականի մարտի 26-ը՝ շաբաթական 1 (մեկ) չվերթ հաճախականությամբ Երևան/UDYZ/-Տյումեն/USTR/ երթուղով Հայաստանի Հանրապետություն տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս երկու և ավելի ոչ կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացմամբ Ընկերությունը բավարարում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով նախատեսված պայմաններին, չսպասարկված ուղղությունների և չվերթերի հաճախականությունների պահանջներին, և սույն կետում նշված Երևան/UDYZ/-Տյումեն/USTR/ երթուղով մեկնող ուղևորներին տրամադրվում է «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «զ» կետով սահմանված արտոնությունը:

3. Սույն հրամանի 2րդ կետով նախատեսված արտոնության սկիզբ սահմանել 2021 թվականի նոյեմբերի 6-ը՝ 36 ամսով: Օդային տրանսպորտի միջազգային ասոցիացիայի (ԻԱՏԱ) ամառային ժամանակահատվածի մասով արտոնության վերաբերյալ դրույթները կսահմանվեն առանձին հրամանով՝ ավիաընկերության ներկայացվող հայտի հիման վրա:

4. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի օգնականին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի և թույլտվության տեղադրումը Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի կայքում:

5. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի օդային փոխադրումների կարգավորման վարչության պետի պաշտոնակատարին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանով նախատեսված թույլտվությունների հանձնումն Ընկերությանը:

ՏԱԹԵՎԻԿ ՌԵՎԱԶՅԱՆ

Revoked certificate

X

ՏԱԹԵՎԻԿ ՌԵՎԱԶՅԱՆ

Signed by: REVAZYAN TATEVIK 7201880926

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ 811/251021
ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՕԴԱՆԱՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻՑ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

PERMISSION 811/251021
TO THE FOREIGN OPERATOR FOR SCHEDULED AIR SERVICES OPERATION TO, FROM AND WITHIN THE TERRITORY OF THE REPUBLIC OF ARMENIA

Օդանավ շահագործողը Aircraft Operator	«Յուտէյր» Ավիաընկերություն» ԲԲԸ "UtAir" Aviation PJSC
Օդանավի (օդանավերի) տիպը (տիպերը) Type(s) of aircraft	BOEING 737-800, BOEING 737-500, BOEING 767-200, BOEING 737-400
Հաճախականությունը Frequency	շաբաթական 1 չվերթ 1 flight per week
Երթուղին Air Route	Տյումեն/USTR/-Երևան/UDYZ/-Տյումեն/USTR/ Tyumen/USTR/-Yerevan/UDYZ/-Tyumen/USTR/
Թույլտվության գործողության ժամկետը Permission validity	06/11/2021 մինչև 26/03/2022 06/11/2021 till 26/03/2022

10/26/2021

ՔԱՂԱՔԱՑԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ
ՏԱԹԵՎԻԿ ՌԵՎԱԶՅԱՆ
CHAIR OF CIVIL AVIATION COMMITTEE
TATEVIK REVAZYAN

X

ՏԱԹԵՎԻԿ ՌԵՎԱԶՅԱՆ
Signed by: REVAZYAN TATEVIK 7201880926

26.10.2021
(տալու ամսաթիվը)
(date of issue)